ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀՀ կրթության տեսչական մարմնի խորհրդի նիստ

ք.Երևան

07 սեպտեմբերի 2018թ.

Ժամը 16^{00}

Մասնակիցներ

Ա.Հարությունյան - ՀՀ կրթության և գիտության նախարար (խորհրդի նախագահ)

Հ. Այվազյան -ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Ա. Բաբայան - ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ

Ս. Ալոյան - «Դասարան» կրթական ծրագրի հիմնադիր նախագահ

Բ. Փափազյան - «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդի անդամ

Ա. Բախշյան -«Հանրային դիվանագիտություն» հասարակական կազմակերպության նախագահի կրթության հարցերով խորհրդական

Թ. Ավակյան - «Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամի ծրագրի գլխավոր տնօրեն

Բացակայում էին

Ա.Ասատրյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Ա.Հայրապետյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Ներկա էր

Ալ. Շագաֆյան - ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավար

Հրավիրվածներ

Տ. Հակոբյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ

Հ. Ասլանյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ

Ռ. Գալստյան - ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ

ՕՐԱԿԱՐԳ

Հարց 1. ՀՀ կրթության տեսչական մարմնի 2019 թվականի բյուջետային հայտի նախագծի քննարկում և հավանության արժանացում:

Հարց 2. Հանրակրթական (այդ թվում՝ նախադպրոցական), նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների կրթության որակի գնահատման համար անհրաժեշտ ձևաթղթերի քննարկում և հաստատում:

Հարց 3. «Ամփոփ արդյունքներ» ձևաթղթերի քննարկում և հաստատում:

Հարց 4. Ստուգումների, ուսումնասիրությունների (այդ թվում՝ հետադարձ կապի) արդյունքում կազմվող ակտերի, արձանագրությունների ձևաթղթերի քննարկում և հաստատում:

Հարց 5. Այլ հարցեր

Նիստը վարում էր կառավարման խորհրդի նախագահ՝ **Ա. Հարությունյանը**

Ա. Հարությունյանը խորհրդի հաստատմանը ներկայացրեց նիստի օրակարգը, որում ընդգրկված էր 5 հարց:

Խորհրդի անդամները օրակարգը հաստատեցին ՄԻԱՁԱՅՆ:

Նախագահողը առաջարկեց ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավար Ալ. Շագաֆյանին ներկայացնել օրակարգային հարցերը:

<u>Օրակարգի առաջին հարցով</u> Ալ. Շագաֆյանը ներկայացրեց ՀՀ կրթության տեսչական մարմնի 2019 թվականի բյուջետային հայտի նախագիծը:

Ալ. Շագաֆյանը մասնավորապես պարզաբանեց բյուջետային հայտի այն հոդվածները, որոնցում ի համեմատ 2018 թվականի բյուջեի հատկացումների ավելացում է նախատեսվում.

«Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածով 7 մլն. դրամը նախատեսվում է ծախսել ԿՏՄ տարածքը լոկալ ջեռուցման և անվտանգության համակարգերով ապահովելու համապար:

«Վարչական սարքավորումներ» հոդվածով 4 մլն. դրամը նախատեսված է ԿՏՄ տեխնիկական միջոցների (համակարգիչներ և այլ սարքավորումներ) թարմացման համար: ԿՏՄ հաշվեկշռում առկա տեխնիկական միջոցները հին են, չեն նպաստում աշխատանքների արդյունավետ իրականացմանը:

Նախորդ տարվա համեմատ գրեթե կրկնակի ավելացվել է «Գուրծուղումների և շրջագայությունների ծախսեր» հոդվածով նախատեսված գումարները՝ պայմանավորված ԿՏՄ վերահսկողության ոլորտներին առնչվող դիմում-բողոքների աննախադեպ մեծ թվով, ինչպես նաև 2019 թվականին ավելի մեծ ծավալի վերահսկողոկան աշխատանքների պլանավորմամբ:

Օրակարգի երկրորդ հարցով Ռ.Գալստյանը ներկայացրեց Հանրակրթական (այդ թվում՝ նախադպրոցական), նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների կրթության որակի գնահատման համար անհրաժեշտ ձևաթղթերը:

Օրակարգի երրորդ հարցով Ռ.Գալստյանը ներկայացրեց «Ամփոփ արդյունքներ» ձևաթղթերը:

Օրակարգի չորորդ հարցով Ռ.Գալստյանը ներկայացրեց Ստուգումների, ուսումնասիրությունների (այդ թվում՝ հետադարձ կապի) արդյունքում կազմվող ակտերի, արձանագրությունների ձևաթղթերը:

Ս. Ալոյանը և Թ. Ավակյանը առաջարկեցին համագործակցել տրամադրելով համապատասխան տեղեկատվություն ստուգումների գործընթացը ավելի արդյունավետ անցկացնելու, ինչպես նաև ԿՏՄ անձնակազմի համար կազմակերպել անվճար դասընթացները, որոնք կնպաստեն կրթության որակի ավելի արդյունավետ վերահսկողությանը: «Դասարան» կրթական ծրագիրն ու ԿՏՄ-ն համատեղ կքննարկեն ուսումնական հաստատությունների և մանկավարժների հաջողված փորձի խրախուսման գործիքներ, մինչդեռ «Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամը կաջակցի ԿՏՄ-ին դասալսումների ավելի արդյունավետ մեթոդաբանությամբ և գործիքակազմով:

Ա.Բախշյանն իր մտահոգությունները ներկայացրեց ԿՏՄ ձևաթղթերի որոշ բնութագրիչների վերաբերյալ: Մասնավորապես Ա.Բախշյանին հետաքրքիր էր թե ԿՏՄ-ն բացի նրանից որ ստուգում է ուսումնական հաստատությունում ներքին կարգապահական կանոնների առկայությունը, ինչպես է հավաստիանում թե այդ կանոններն որքանով են գործում:

Ա.Բախշյանը նաև մտահոգություն հայտնեց ԿՏՄ-ի կողմից դիմում-բողքներ ուսումնասիրելիս, որոշ դեպքերում, բողոքի բովանդակությունն ուսումանական հաստատության անձակազամին ներկայացնելու վերաբերյալ: Առաջարկեց վերանայել և այլ մոտեցում որդեգրել:

Քննարկման ընթացքում հնչեցին առանձին կարծիքներ և մեկնաբանություններ:

Այլ հարցեր չքննարկվեցին:

Ամփոփելով նիստը՝ կառավարման խորհրդի նախագահ Ա. Հարությունյանը քննարկված հարցերը դրեց քվեարկության:

Խորհուրդը միաձայն որոշեց՝

1.Հավանություն տալ ՀՀ կրթության տեսչական մարմնի 2019 թվականի բյուջետային հայտի նախագծին: (**09-04-01 որոշումը**)

2.Հաստատել հանրակրթական (այդ թվում՝ նախադպրոցական), նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների կրթության որակի գնահատման համար անհրաժեշտ ձևաթղթերին՝ հաշվի առնելով նիստի ընթացքում խորհրդի անդամների բարձրացված հարցերը և դրանք համադրելով «Դասավանդիր, Հայաստան»-ի համապատասխան գործիքակազմի հետ: (**09-04-02 որոշումը**)

3.Հաստատել «Ամփոփ արդյունքներ» ձևաթղթերը: (**09-04-03 որոշումը**)

4.Հաստատել ստուգումների, ուսումնասիրությունների (այդ թվում՝ հետադարձ կապի) արդյունքում կազմվող ակտերի, արձանագրությունների ձևաթղթերը: (**09-04-03 որոշումը**)

ՀՀ կրթության և գիտության նախարար, խորհրդի նախագահ

Ա.Հարությունյան

ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար, խորհրդի անդամ

Հ. Այվազյան

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ, խորհրդի անդամ

Ա.Բաբայան

«Դասարան» կրթական ծրագրի հիմնադիր նախագահ, խորհրդի անդամ

Ս.Ալոյան

«Թումո» սեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի տնօրեն, խորհրդի անդամ

Բ. Փափազյան

«Հանրային դիվանագիտություն» ՀԿ-ի կրթության հարցերով խորհրդական, խորհրդի անդամ

Ա. Բախշյան

«Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամի ծրագրի գլխավոր տնօրեն, խորհրդի անդամ

Թ. Ավակյան